

ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՀՈՂԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԱՃՈՒՐԴՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ

-Համայնքներում հողերի աճուրդ կամ մրցույթ անցկացնելու նպատակով համայնքի ղեկավարը 1 ամիս առաջ՝, Հայաստանի Հանրապետություն, օրաթերթում հրապարակում է հայտարարություն, որտեղ նշվում է աճուրդի կամ մրցույթի անցկացման օրը, ժամը, վայրը և տվյալներ աճուրդով օտարվող կամ վարձակալությամբ տրամադրվող հողամասերի վերաբերյալ:

-Աճուրդին կամ մրցույթին կարող է մասնակցել յուրաքանչյուր քաղաքացի՝ աճուրդի կամ մրցույթի անցկացմանը նախորդող երեք օրերի ընթացքում ներկայացնելով անձնագիր և տեղում լրացնելով հայտը (դիմում):

-Մինչև աճուրդի կամ մրցույթի անցկացումը քաղաքացին պարտավոր է համայնքի բյուջե մուծել աճուրդի կամ մրցույթի մասնակցության վերաբերյալ համայնքի ղեկավարի կողմից սահմանված մուտքավճարը:

-Աճուրդը կամ մրցույթը կազմակերպվում և անցկացվում է մրցութային հանձնաժողովի կողմից:

-Աճուրդի կամ մրցույթի անցկացման օրը քաղաքացին պարտավոր է ներկայացնել նաև մուտքավճարի անդորրագիրը:

-Եթե մրցույթի կամ աճուրդի մասնակիցը արդյունքում հաղթող չի ճանաչվում, ապա մուտքավճարի գումարը չի վերադարձվում, իսկ հաղթող ճանաչվելու դեպքում նրա հետ կնքվում է առ ու վաճառքի կամ վարձակալական պայմանագիր՝ կիրառելով օրենքով սահմանված համապատասխան գործառույթները:

-